ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» մայիսի 2023թ. № 369

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԾԱՂԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ ծաղիկներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 100 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» մայիսի 2023թ. № 370

«ԱՐԱՄԱՅԻՍ ՍՈՒՐԵՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐԱՄԱՅԻՍ ՍՈՒՐԵՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի մայիսի 8-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐԱՄԱՅԻՍ ՍՈՒՐԵՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66001393) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի 1փ. 54շ» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 38,1 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի 2-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 8
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. № 371

ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿ ԱՐՄԵՆ ԱՐՄԱՆԻ ԱՂՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՇԱՆՎԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի մարզիկ Արմեն Արմանի Աղումյանը Սամբոյի Եվրոպայի 2023 թվականի պատանիների առաջնությունում զբաղեցրել է 1-ին տեղը, հիմք ընդունելով մոր՝ Իրինա Ալբերտի Սահակյանի դիմումը և Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝

1) «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 200 000 ՀՀ դրամ:

2) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից շնորհակալագիր և շնորհակալագրի շրջանակ ձեռք բերելու համար հատկացնել 2 300 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. № 372

ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿ ՄԽԻԹԱՐ ՆՈՐԱՅՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ Հայաստանի սամբոյի հավաքականի կազմի մարզիկ Մխիթար Նորայրի Մխիթարյանը Եվրոպայի 2023 թվականի մեծահասակների մարտական սամբոյի առաջնությունում զբաղեցրել է 3-րդ տեղը, հիմք ընդունելով մարզիկի դիմումը և Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝

1) «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից հատկացնել 350 000 ՀՀ դրամի:

2) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից շնորհակալագիր և շնորհակալագրի շրջանակ ձեռք բերելու համար հատկացնել 2 300 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. № 373

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-052-0065-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,159 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1010392 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06052UCBEPRW) և Ռուզան Ռաֆիկի Գևորգյանի (ծնված՝ 03.01.1956թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող 06-052-0065-0010 կադաստրային ծածկագրով 0,159 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 100,8 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 49,5 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ գյուղ Կաթնաջուր, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք 15 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1815):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. № 374

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՄՎԵԼԻ ԷՏԻԲԱՐՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,106 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով որ Սպիտակ քաղաքում գտնվող 0,106 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 305,60 քառակուսի մետր մակերեսով անասնագոմի 1/2 մասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի նոյեմբերի 14-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 2926) փոխանցվել է Վաղինակ Սամվելի Էտիբարյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006WQKYN6S) և Վաղինակ Սամվելի Էտիբարյանի (ծնված՝ 10.08.1975թ.) դիմումը՝ ***որոշում եմ***

1. Վաղինակ Սամվելի Էտիբարյանին ժառանգաբար փոխանցված Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 0,106 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 305,60 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «ք. Սպիտակ, Ուզբեկական Կ-9 թաղամաս, 35 անասնաշենք» հասցեն (փոստային դասիչը՝ 1805):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. № 375

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՋՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-068-0034-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,158 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Արջհովիտ բնակավայրում գտնվող 06-068-0034-0022 կադաստրային ծածկագրով 0,158 հեկտար մակերեսով հողամասի 1/2 մասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի մարտի 29-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 812) փոխանցվել է Վաղինակ Սամվելի Էտիբարյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06068BKYMFME) և Վաղինակ Սամվելի Էտիբարյանի (ծնված՝ 10.08.1975թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրում գտնվող 06-068-0034-0022 կադաստրային ծածկագրով 0,158 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Արջհովիտ, 6-րդ փողոց, 13 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1817):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » մայիսի 2023թ. № 376

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ մարզիկներ Նարեկ Գարուշի Դանիելյանը, Սևակ Արգամի Դավոյանը, Վոլոդյա Արտակի Սիմոնյանը, Գևորգ Ռոլանդի Ամրոյան, Հովհաննես Կարենի Կարապետյանը Հայաստանի ձեռնամարտի պատանիների առաջնությունում զբաղեցրել են 1-ին տեղերը, Արգիշտի Ասպետի Գալստյանը, Գագիկ Համբարձումի Մագոյանը, Սերյոժա Էդիկի Թադևոսյանը, Նորայր Շահենի Ալավերդյանը զբաղեցրել են 2-րդ տեղերը, Արտյոմ Ալիկի Բոյախչյանը զբաղեցրել է 3-րդ տեղը, հիմք ընդունելով Կարինե Սիրեկանի Ավետիսյանի, Սիրարփի Համբարձումի Նիկողոսյանի, Լիաննա Վաղարշակի Մարտիրոսյանի, Ռոլանդ Սերյոժայի Ամրոյանի, Մարզո Սեյրանի Կարապետյանի, Ասպետ Գնունի Գալստյանի, Անուշ Հրահատի Ղարիբյանի, Սվետլաննա Սամվելի Մանուկյանի, Շահեն Ռաֆիկի Ալավերդյանի, Ալիկ Նորիկի Բոյախչյանի դիմումները և 28.03.2023թ-ին տրված դիպլոմները՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման « Գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական դասակարգման 4261 հոդվածից հատկացնել 189 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի 2023թ. № 377

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 06-006-0023-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00883 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի մայիսի 10-ի թիվ 01/111.4/03343-2023 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, 27 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0023-0025 կադաստրային ծածկագրով 0,00883 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ.Զորանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի 202թ. № 378

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ 06-006-0304-0096 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,124 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ քաղաքի տարածքում գտնվող 06-006-0304-0096 կադաստրային ծածկագրով 0,124 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրված «ք. Սպիտակ Քըրք Քըրքորյան փողոց 249 բնակելի տուն» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գրանցման թիվ N 18052016-06-0002 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006JKPTFVK) և Հարություն Լիպարիտի Մաթևոսյանի (ծնված՝ 11.08.1966 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ քաղաքում գտնվող 06-006-0304-0096 կադաստրային ծածկագրով, 0,124 հեկտար մակերեսով հողամասի, դրա վրա գտնվող 78,5 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 68,08 քառակուսի մետր մակերեսով խոհանոցի, 76,64 քառակուսի մետր մակերեսով մառանի և 48,88 քառակուսի մետր մակերեսով մառանի առկա «ք. Սպիտակ Քըրք Քըրքորյան փողոց 249 բնակելի տուն» հասցեն փոփոխել «ք. Սպիտակ, Հ. Թումանյան փողոց 3-րդ փակուղի, 3 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1806):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ.մայիսի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի 2023թ. № 379

ՎԱՂԻՆԱԿ ՍԱՄՎԵԼԻ ԷՏԻԲԱՐՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ՝ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,0535 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ քաղաքի տարածքում գտնվող 0,0535 հեկտար մակերեսով հողամասն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի մարտի 29-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 812) փոխանցվել է Վաղինակ Սամվելի Էտիբարյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060067T67BF9) և Վաղինակ Սամվելի Էտիբարյանի (ծնված՝ 10.08.1975թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Վաղինակ Սամվելի Էտիբարյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 0,0535 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «ք. Սպիտակ Այգեստան փողոց, 7/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » մայիսի 2023թ. № 380

ՍԱՄՎԵԼ ՀՐԱՆՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԵ ՍԱՍՈՒՆԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, 2023 թվականի ապրիլի 19-23-ին Իսրայելի Հայֆա քաղաքում անցկացված Սամբոյի Եվրոպայի դեռահասների առաջնությունում պատվավոր տեղեր զբաղեցրած՝ «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի մարզիկներ Սամվել Հրանտի Դանիելյանին և Անդրե Սասունի Սարդարյանին խրախուսելու նպատակով շնորհակալագրեր, շնորհակալագրի շրջանակներ և հուշանվերներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝

1) «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4769 հոդվածից հատկացնել 14 000 ՀՀ դրամ:

2) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 4 600 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 11
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » մայիսի 2023թ. № 381

«ԱՐՏ ՄՅՈՒԶԻՔ» ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 14-ՐԴ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի սաներ Սոֆյա Վլադիկի Գրիգորյանը, Նարեկ Դավթի Շարբաթյանը «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային 14-րդ մրցույթ-փառատոնում զբաղեցրել են 3-րդ տեղերը, Անգելինա Արմենի Բաբայանը զբաղեցրել է 2-րդ տեղը, հիմք ընդունելով օրինական ներկայացուցիչներ Թամարա Վալերիկի Աղամալյանի, Նարինե Սամվելի Սարդարյանի, Ռուզաննա Ավետիքի Զաքարյանի դիմումները, տրված դիպլոմները և «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային փառատոնի ասոցիացիայի կողմից տրված տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հուշանվերներ և շնորհակալագրեր ձեռք բերելու համար հատկացնել 171 200 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի 2023թ. № 382

«ՓԱՐԻԶԻ ԱՍՏՂԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ ՆՌԱՆԵ ՍԱՐԳՍԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՇԱՆՎԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի սան Նռանե Սարգսի Մարկոսյանը «Փարիզի Աստղեր» միջազգային երաժշտական փառատոնին զբաղեցրել է 1-ին տեղը, հիմք ընդունելով Նռանե Սարգսի Մարկոսյանի մոր՝ Մարինե Սերժիկի Թադևոսյանի դիմումը և 31.03.2023թ.-ին տրված դիպլոմը ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հուշանվերներ և շնորհակալագրեր ձեռք բերելու համար հատկացնել 55 400 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մայիսի 11
ք.Սպիտակ